ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1960 Общественные науки

Ա. Պ. Հայրապետյան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Սոցիալիստական շինարարության բոլոր էտապներում ժողովրդական տնտեսության կադրերի պատրաստման ու դաստիարակության հարցը եղել է Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառավարության ուշադրության կենտրոնում։ Պարտիայի առաջ այդ հարցը առանձնապես խիստ ծառացավ երկրորդ հնգամյակի տարիներին՝ կապված երկրի ողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ավարտման հետ։

Ժողովրդական տնտեսության կադրերի պատրաստման հարցը դիտապատմական գրականության մեջ քիչ է ուսումնասիրված ու լուսաբանված, մասնավորապես Հայկական ՍՍՌ նյութերի հիման վրա։ Ներկա հոդվածում փորձ է արվում ընդհանուր գծերով ցույց տալ ժողովրդական տնտեսության մասնագետների պատրաստումն ու աճը Հայկական ՍՍՌ-ում՝ երկրորդ հնգամյակի տարիներին։

* * *

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին սովետական ժողովուրդը՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ձեռք է բերել մեծագույն հաղթանակներ։ Սովետական ժողովրդի հերոսական աշխատանքի շնորհիվ առաջին հնգամյակի հսկայական պլանները կատարվեցին ժամանակից շուտ։ ԿԿ-ը և Համկ(բ)Պ Կենտկոմի 1933 թվականի հունվարյան միացյալ պլենումը, քննարկելով առաջին հնգամյակի հանրագումարները, նշեց, որ մեր երկիրը հետամնաց ագրարային երկրից վեր է ածվել ինդուստրիալ-կոլխոզային երկրի։ Առաջին հնգամյակի վերջում Սովետական Միության ազգային ռեսպուբլիկաները, այդ թվում և Հայկական ՍՍՌ-ն, ժողովրդական տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում հասան մեծ նվաճումների։ Այդ նվաճումները պարտիայի լենինյան ազգային քաղաքականության իրականացման արդյունքն էին։

ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը հայկական ռեսպուբլիկայի համար նախատեսում էր ողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումը և դրա հիմքի վրա՝ ռեսպուբլիկայի տնտեսության և կուլտուրայի ծաղկման ապահովումը։ Ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումները կազմում էին 984,9 միլիոն ռուբլի, որից արդյունաբերության մեջ՝ 233,6 միլիոն ռուբլի[1] որն

[1] „Социалистическое строительство АрмССР", Статистический сборник, Ереван, 1940, стр. 19.

ավելի քան երեք անգամ ավելի էր առաջին հնգամյակի կապիտալ ներդրումներից։

Երկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումն ավարտելու համար, կապիտալ շինարարության հսկայական ֆինանսավորումից և նորագույն տեխնիկայի առկայությունից բացի, պահանջվում էր նաև այնպիսի մի ուժ, որը կարողանար այդ միջոցները և տեխնիկան շարժման մեջ դնել։ Այդ ուժը մարդիկ էին, առաջին հերթին արտադրական կադրերը։ Մենք ունեինք այդպիսի կադրեր, բայց նրանք քիչ էին և տակավին հետ էին մնում տեխնիկային տիրապետելու գործում։

Հետևաբար, սոցիալիստական արտադրության աճի և անընդհատ կատարելագործման համար բարձր որակի, տեխնիկապես գրագետ մարդկանց պատրաստումը դառնում էր կարևորագույն անհրաժեշտություն։

Երկրորդ հնգամյակի տարիներին կադրերի կողմից տեխնիկային տիրապետելը պարտիայի առաջ կանգնած կարևորագույն հարցերից մեկն էր։ ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանի մասին Համկ(բ)Պ 17-րդ համագումարի որոշումներում նշվում էր, որ «տեխնիկական վերակառուցման, տեխնիկային տիրապետելու և աշխատանքի արտադրողականության ուղղությամբ խնդիրների կատարման իրականացման վճռական պայմանը հանդիսանում է որակյալ բանվորների, տեխնիկների և ինժեներների պատրաստումը, ուժեղ, պրոլետարական արտադրատեխնիկական ինտելիգենցիայի ստեղծման պրոբլեմի լուծումը»[2]։

Ժողովրդական տնտեսության կադրերի, այդ թվում և արդյունաբերական կադրերի պատրաստումը Հայկական ՍՍՌ-ում իրականացվում էր տարբեր կանալներով։ Բարձր և միջին որակի մասնագետները պատրաստվում էին բուհերի և տեխնիկումների միջոցով։ Արդյունաբերության մասնագետների շարքերը համալրվում էին նաև այն բանվորներով, որոնք հատուկ կուրսեր էին անցնում։ Բանվորների մասսայական կադրերը պատրաստվում էին մի կողմից ֆարգործուսների և մյուս կողմից անմիջապես արտադրության մեջ, դաղդահի մոտ։ Կադրերի պատրաստման համար մղվող պայքարը պարտիական, տնտեսական և պրոֆմիութենական կազմակերպությունների առաջ կանգնած պատասխանատու և պատվավոր խնդիրներից մեկն էր, երկրորդ հնգամյակի տարիներին։

Ժողովրդական տնտեսության կադրերի պատրաստման բնագավառում ձեռք բերած նշանակալից հաջողություններում մեծ դեր խաղացին Համկ(բ)Պ կենտկոմի 1928 թ. հուլիսյան և 1929 թ. նոյեմբերյան պլենումների որոշումները, ինչպես նաև ՍՍՌՄ կենտգործկոմի 1932 թվականի սեպտեմբերի 29-ի որոշումը՝ ժողովրդական տնտեսության կադրերի պատրաստման մասին։ Այդ որոշումներում նշվում էին մի շարք միջոցառումներ՝ բարձրագույն և միջնակարգ դպրոցների վերակառուցման և բուհերում ու տեխնիկումներում ուսումնական աշխատանքների ու ռեժիմի կարգավորման ուղղությամբ[3]։

Ելնելով կադրերի պատրաստման վերաբերյալ պարտիայի ու կառավարության որոշումներից, ԱՍՖՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետը 1930 թ. հունիսի 14-ին որոշում ընդունեց «ԱՍՖՍՌ-ում բարձրագույն և միջնակարգ

[2] „КПСС в резолюциях...", ч. 2, стр. 754.

[3] Сборник законов и распоряжений правительства СССР, 1932, № 66.

կրթության վերակառուցման մասին»[4]։ Որոշման մեջ նշվում էր, որ կադրերի հարցը ԱՍՖՍՌ-ում հատկապես սրվում է ինդուստրացման բուռն աճի պատճառով։ Բուհերը և տեխնիկումները, ուսուցման իրենց սիստեմով և արտադրանքով, դեռևս չեն ապահովում ժողովրդական տնտեսության պահանջները։

Խնդիրը նրանում էր, որպեսզի ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման պահանջները մասնագետների տեսակետից բավարարվեին ինչպես քանակապես, այնպես էլ որակապես։ Այդ նպատակով էլ ընդլայնվեցին բուհերի և տեխնիկումների ցանցը ու խնդիր դրվեց մոտակա տարիներին բանվորական կորիզը բուհերում հասցնել 70%-ի, գյուղատնտեսական բուհերում բանվոր, բատրակ, չքավոր գյուղացի և կոլխոզնիկ ուսանողների տոկոսը հասցնել 75%-ի[5]։ Բոլոր բուհերը, բուհերը և տեխնիկումները հանձնվեցին համապատասխան ժողկոմատների տնօրինությանը և նախատեսվում էր դրանք միավորել համաձայն ճյուղային հատկանիշների։ Հիշված ուսումնական հաստատությունների ծրագրային և մեթոդական ղեկավարության ապահովումը դրվում էր միութենական ռեսպուբլիկաների լուսավորության ժողովրդական կոմիսարների վրա։

ԱՍՖՍՌ ժողկոմխորհի որոշման հիման վրա բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցի վերակառուցումից հետո մասնագետ կադրերի պատրաստման ուսումնական հաստատությունների թիվը բավականին ավելացավ։ Հայաստանում բուհերի թիվը հասավ վեցի, տեխնիկումներինը՝ 48-ի և բանֆակներինը՝ իննի։ Մինչ այդ Հայաստանում կար ընդամենը 2 բարձրագույն ուսումնական հաստատություն։

Բուհերի քանակի աճը Հայաստանում հետևանք էր Երևանի Պետական համալսարանի վերակառուցման, որը տեղի ունեցավ 1930 թ.։ Այդ վերակառուցմամբ համալսարանի մի շարք ֆակուլտետների բազայի վրա կազմակերպվեցին նոր, ինքնուրույն ինստիտուտներ։ Այսպես. տեխնիկական ֆակուլտետի բազայի վրա կազմակերպվեց Ինժեներա-տեխնիկական (շինարարական) ինստիտուտը, մանկավարժական ֆակուլտետի բազայի վրա՝ Մանկավարժական ինստիտուտը, բժշկական ֆակուլտետի բազայի վրա՝ Բժշկական ինստիտուտը, գյուղատնտեսական ֆակուլտետի բազայի վրա՝ Գյուղատնտեսական ինստիտուտը։

Երեք տարի հետո, 1933 թ. նորից կազմակերպվում է Երևանի Պետական համալսարանը։ Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի 1933 թվականի հունիսի 10-ի «Պետական համալսարանի կազմակերպման մասին» որոշման մեջ նշվում էր, որ «ելնելով երկրի ժողովրդա-տնտեսական մասնագետ կադրերի պահանջից, որոնք զինված լինեն կոնկրետ ընդգավառում գիտության վերջին նվաճումներով, ունենան մարքսիստական-լենինյան պատրաստություն, կարողանան կողմնորոշվել սոցիալիստական շինարարության բոլոր հարցերում, 1933 թ. աշնանը Մանկավարժական ինստիտուտի բազայի վրա կազմակերպել Հայկական ՍՍՌ-ի Պետական համալսարանը»։

Կազմակերպորեն ամրապնդելու և պրոֆիլի որոշման համար, ելնելով ժողովրդական տնտեսության կուլտուրայի բարձր որակավորման կադրեր ունենալու աճող պահանջներից, Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը 1934 թ. որո-

[4] Հայկական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 113, 1930, գ. 346, թ. 2։

[5] Նույն տեղում, թ. 6։

[6] Центральный партархив ИМЛ при ЦК КПСС, ф. 17, 1933, оп. 14, ед. хр. 89, л. 49.

շում է ընդունում Երևանի Պետական համալսարանի կառուցվածքի մասին[7]։ Այդ որոշման հիման վրա հաստատվում են ֆակուլտետների նոր կազմ.

1. Պատմագրական, ուսման տևողությունը 5 տարի, 2. Տնտեսագիտական, ուսման տևողությունը 4 տարի, 3. ֆիզիկա-մաթեմատիկական, ուսման տևողությունը 5 տարի, 4. քիմիական, ուսման տևողությունը հինգ տարի, 5. երկրաբանական, ուսման տևողությունը 5 տարի, 6. կենսաբանական, ուսման տևողությունը 5 տարի, 7. բանվորական, ուսման տևողությունը 4 տարի, 8. սովետական իրավունքի կուրսեր, ուսման տևողությունը 3 տարի։

Այդ նույն որոշման հիման վրա համալսարանին կից կազմակերպվում են հինգ գիտա-հետազոտական ինստիտուտներ. 1. Ֆիզիկայի և քիմիայի ինստիտուտ, 2. Աստղաբաշխական օբսերվատորիա, 3. Մանկավարժության ինստիտուտ, 4. Բիոլոգիայի ինստիտուտ և 5. Բիոլոգիական թանգարան[8]։

Երևանի համալսարանի պրոֆիլի ճշտումը ազգային կադրերի պատրաստման ուղղությամբ պարտիայի և կառավարության հոգատարության արդյունքն էր։ Պետական համալսարանը հետագայում դարձավ ազգային բարձրագույն կադրերի պատրաստման կարևոր կենտրոն։

Որակյալ կադրերի պատրաստման վերաբերյալ պարտիայի դիրեկտիվների իրականացման նպատակով պարտիական և սովետական կազմակերպությունները կոնկրետ միջոցառումներ էին ձեռնարկում ուսանողների քանակի ավելացման և նրանց նյութական ու կուլտուրական դրությունը բարելավելու ուղղությամբ։

Հայկական ՍՍՌ ժողովրդական Կոմիսարների Սովետը 1932 թ. դեկտեմբերի 7-ին որոշում է ընդունում՝ «Հայկական ՍՍՌ ինստիտուտների և տեխնիկումների սովորողների կենցաղային պայմանները բարելավելու միջոցառումների մասին»[9]։ Այդ որոշմամբ բավականին լավացավ ուսանողական հանրակացարանների վիճակը։ Սովորողների կոմունալ-կուլտուրական սպասարկման գործը բարելավելու համար բաց է թողնվում 75 հազար ռուբլի։ Բարելավվում է ուսանողների սննդի գործը։

Ուսանողների կուլտուր-սանիտարական վիճակի բարելավման գործում կարևոր նշանակություն ունեցավ Հայկական ՍՍՌ ԺողԿոմսովետի 1933 թ. փետրվարի 8-ի որոշումը՝ «Բուհ-երի, Բուհ-երի և տեխնիկումների սովորողների սանիտարական, բժշկական և սանատորիական սպասարկումը բարելավելու մասին»[10]։ Այդ որոշման մեջ ռեսպուբլիկայի ՖինԺողԿոմատին առաջարկվում է առանձին գերատեսչությունների միջոցներից և պետական բյուջեից միջոցներ առանձնացնել տվյալ որոշումն իրականացնելու համար։ Այդ նպատակի համար առանձնացվում է 119,330 ռուբլի։

Ժողովրդական տնտեսության, այդ թվում և արդյունաբերության համար կադրերի պատրաստման ուղղությամբ պարտիայի և կառավարության դիրեկտիվները իրականացնելու գործում նշանակալից դեր խաղացին Հայաստանի Կ(բ)Պ VIII և IX համագումարները։

---

[7] Там же, ф. 17. 1934. оп. 14, ед. хр. 10, л. 121.
[8] Там же.
[9] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 113, 1932—34, գ. 1060, թ. 14։
[10] Նույն տեղում, թ. 31։

VIII համագումարը (1932 թ.) նշեց, որ արդյունաբերության հետագա վերելքի համար կարևոր նշանակություն ունի կադրերի պատրաստումը և նրանց ռացիոնալ օգտագործումը։ Դրա համար էլ համագումարը պահանջում էր բարելավել ժողովրդական տնտեսության համար կադրերի պատրաստման գործը[11]։ Կադրերի պատրաստմանը մեծ ուշադրություն նվիրեց նաև Հայաստանի Կ(բ)Պ IX համագումարը (1934 թ. հունվար)։ Համագումարը պարտիական և սովետական կազմակերպություններից պահանջում էր սիստեմատիկ զբաղվել սոցիալիստական շինարարության այդ կարևոր հարցով և հասնել սովետական կադրերի պատրաստման որակի բարելավմանը։

Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը 1935 թ. հունվարին որոշում է ընդունում «Երևանի պետական համալսարանի, բժշկական և պոլիտեխնիկական ինստիտուտների ուսանողների նյութական և կենցաղային դրության մասին»[12]։ Այդ որոշումն իրականացվում է ուսանողական կոոպերատիվների վերացմամբ, և ուսանողների մատակարարման ու սննդի գործը դրվում է ինստիտուտների դիրեկտորների վրա։

Ռեսպուբլիկայի բուհերի և տեխնիկումների պարտիական կազմակերպությունները իրենց աշխատանքի հիմքում դնելով ՀամԿ(բ)Պ Կենտկոմի հուլիսյան (1928 թ.), նոյեմբերյան (1929 թ.) պլենումների, ՍՍՌՄ Կենտգործկոմի 1932 թ. սեպտեմբերի 19-ի և այլ որոշումներ, բուհերի և տեխնիկումների աշխատանքների վերակառուցման աշխատանքներում հասան նշանակալից հաջողություններ։ Այդ բանն են վկայում շատ սկզբնական պարտիական կազմակերպությունների, այդ թվում և Պոլիտեխնիկական ինստիտուտի պարտկազմակերպության կատարած աշխատանքը։

Պոլիտեխնիկական ինստիտուտի պարտիական սկզբնական կազմակերպության 1934 թ. հունվարի 4-ի հաշվետու ընտրական ժողովի նյութերը, պարտիական կոմիտեի երկու տարվա աշխատանքի մասին, ցույց են տալիս, որ պարտիական կազմակերպությունը առաջնորդվելով պարտիայի և կառավարության դիրեկտիվային ցուցումներով, հասել է ուսման որակի բարելավմանը։ Ինստիտուտում ամրապնդվել են կադրերը, ընդլայնվել լաբորատորիաները և ստեղծվել են նոր լաբորատորիաներ (նախագծային, շինանյութերի, քիմիական, օրգանական և այլն)։ Բարձրացել է ուսանողների կարգապահությունը, դասախոսների պահանջկոտությունը և նրանց պատասխանատվությունը ուսանողների առաջադիմության գործում։ Պարտիական կազմակերպությունը միաժամանակ ուժեղացրել է ուսանողների և դասախոսական կազմի մեջ տարվող քաղ-դաստիարակչական աշխատանքները։

Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի պարտիական կազմակերպությունը նշանակալից ուշադրություն է դարձնում նաև պրակտիկայի հետ տեսական գիտելիքների կապի վրա։ Այդ բանի համար ինստիտուտի դիրեկցիան չի սահմանափակվել ուսանողներին պրակտիկայի ուղարկելով միայն Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները, այլ միաժամանակ նրանց պրակտիկայի է ուղարկել Մոսկվայի, Լենինգրադի, Խարկովի, Դնեպրոպետրովսկի և այլ քաղաքների լավագույն ձեռնարկությունները։ Այս-

[11] Резолюция VIII съезда КП(б) А, 1932, Ереван, стр. 9.
[12] „Коммунист", 10 января, 1935, № 9.

պես, միայն 1936 թ. արտադրական պրակտիկա անցած 104 ուսանողներից 34-ը իրենց պրակտիկան անց են կացրել Մոսկվայում, 31-ը՝ Լենինգրադում, իսկ մնացածը՝ Ուկրաինայի և Հայաստանի քաղաքներում[13]։

Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ամենօրյա հոգատարությունը կադրերի պատրաստման նկատմամբ, տվեց իր նշանակալից արդյունքները։ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը 1934 թ. հասավ ութի՝ Պետական համալսարան, Մանկավարժական ինստիտուտ, Պոլիտեխնիկական ինստիտուտ, գյուղատնտեսական ինստիտուտ, Բարձրագույն Կոմունիստական գյուղատնտեսական դպրոց, Բժշկական ինստիտուտ, Բարձրագույն երաժշտական դպրոց և Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտ, որոնցում սովորում էին 4041 մարդ։ Հայաստանի նշված ուսումնական հաստատությունները 1930—1934 թթ. ժողովրդական տնտեսությանը տվել են 1,448 մասնագետներ, որոնցից 246-ը՝ ինժեներներ։ Մասնագետների պատրաստման մյուս օբյեկտը տեխնիկումներն էին։ 1934 թ. Սովետական Հայաստանում հաշվում էր 43 տեխնիկում. 7 ինդուստրալ-շինարարական, 13 գյուղատնտեսական, 12 մանկավարժական, 2 բժշկական, 4 երաժշտական-գեղարվեստական և հինգ այլ տեխնիկումներ։ Այս ուսումնական հաստատություններում սովորում էին 7,165 մարդ։ Հայաստանի 7 բանֆակներում սովորում էին 1,392 մարդ։

Հայաստանում երկրորդ հնգամյակի տարիներին բավականին ընդլայնվում է նաև հեռակա ուսուցումը։ 1934 թվականին կային մասնագետ կադրերի հեռակա պատրաստման 6 բարձրագույն հաստատություններ, որոնք ունեին 1032 ուսանող և մեկ տեխնիկում՝ 94 սովորողներով։

Պարտիայի և կառավարության որոշումների իրականացման շնորհիվ, մասնագետների թվական աճի հետ միաժամանակ նշանակալից փոփոխություններ են տեղի ունենում նաև բուհերի և տեխնիկումների ուսանողական կազմի մեջ։ Այդ մասին է վկայում 1934թ. Երևան քաղաքի բուհերն ու տեխնիկումներն ընդունված ուսանողների կազմի մեջ տեղի ունեցած փոփոխությունները։ Համաձայն պլանի նախատեսված էր ընդունել 3,497 սովորող, բայց ընդունվել են 3,710 ուսանողներ, որոնցից 1,009 բանվորներ (28%), 1,273 կոլխոզնիկներ (35%), 392 չքավորներ (12%)։ Ընդունվածների մեջ կոմունիստները կազմում էին 479 (13%), կոմերիտականները՝ 1,743 (48%)։ 1935 թ. ընդունելության հետևանքով բուհերում և տեխնիկումներում կոմունիստների թիվը 990-ից հասավ 1,470 մարդու, իսկ կոմերիտականներինը՝ 2, 535-ից հասավ 4,195 մարդու։

Երկրորդ հնգամյակի տարիներին Հայկական ՍՍՌ բուհերում ուսանողական կազմի մեջ բավականին աճում է նաև կանանց թիվը։ Միայն 1935—1936 ուսումնական տարում Երևան քաղաքի բուհերն ընդունված ուսանողների ընդհանուր թվում կանայք կազմում էին 27,5%-ը[14]։

Երկրորդ հնգամյակի տարիներին բուհերի սովորողների շարքերը լրացվում էին նաև բանֆակներն ավարտածներով։ Սակայն բանֆակների թիվը 1932—33 ուստարուց մինչև 1937—38 ուստարին կրճատվում և 11-ից հասնում է 2-ի։ Եթե 1932—1933 ուսումնական տարում բանֆակներում կային 2,644 սովորողներ, ապա 1937—38 ուսումնական տարում այն հասնում է 665

[13] Մի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 104. գ. 56, թ. 4։
[14] Նույն տեղում ֆ. 113, գ. 62, թ 1։

մարդու[15]։ Սովորողների թիվն այսպիսով, կրճատվում է ավելի քան չորս անգամ։ Այդ բանը բացատրվում է նրանով, որ մեր երիտասարդության ընդհանուր կրթական մակարդակը բավականին բարձրացել էր և բուհեր ընդունվողներ մատակարարելու համար հատուկ բանվորական ֆակուլտետներ պահելը այլևս նպատակահարմար չէր։ Այդ մասին է վկայում Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի 1936 թ. ապրիլի 1-ի «Բանֆակների ցանցի մասին» որոշումը։ Այդ որոշման մեջ նշվում էր, որ նկատի ունենալով, որ միջնակարգ դպրոցների և տեխնիկումների ցանցը ապահովում է բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվող սովորողների կոնտինգենտը, ապա բանֆակների հետագա գոյությունը աննպատակահարմար է։ Դրանից ելնելով էլ Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը որոշում է վերացնել գյուղատնտեսական բանֆակը և 3-րդ ու 4-րդ կուրսերի ուսանողներին ուղարկել գյուղատնտեսական ինստիտուտի նախապատրաստական կուրսերը։ Կենտկոմի որոշմամբ վերացվում է Ալավերդու և այլ բանֆակները։ Շարունակվում էին գոյություն ունենալ Երևանի ինդուստրիալ և Լենինականի տեքստիլ բանֆակները, բայց հետագայում դրանք էլ վերացվեցին։

Երկրորդ հնգամյակի տարիներին բավականին աճում է Սովետական Հայաստանի տեխնիկումների և այլ միջնակարգ ուսումնական հաստատությունների շրջանավարտների թիվը։ Այդ մասին է վկայում հետևյալ աղյուսակը[16]։

	Ընդամենը մինչ 1-ին հնգամյակը և 1-ին հնգամյակի ընթացքում	Ընդամենը 2-րդ հնգամյակում
Ընդամենը	3229	5772
Արդյունաբերության, կապի, շինարարության և տրանսպորտի աշխատողներ	637	1031

Երկրորդ հնգամյակի ընթացքում և նրան հաջորդող տարիներին հայ ժողովրդի բազմաթիվ ներկայացուցիչներ կրթություն են ստացել Ռուսաստանյան ֆեդերացիայի, Ուկրաինայի և եղբայրական այլ ռեսպուբլիկայի քաղաքներում։ Այդ հանգամանքը ազգային կադրերի պատրաստման գործում ռուս և ՍՍՌՄ այլ ժողովուրդների եղբայրական օգնության վկայությունն է։

Անդրկովկասյան ֆեդերացիայի պարտիական և սովետական օրգանները սիստեմատիկաբար հետաքրքրվում և հոգատարություն էին ցուցաբերում անդրկովկասցի այն ուսանողների նկատմամբ, որոնք սովորում էին Մոսկվայում և Լենինգրադում։ Համ Կ(բ)Պ Անդրերկոմը 1934 թ. փետրվարի 28-ի «Մոսկվայում և Լենինգրադում սովորող անդրկովկասցի ուսանողների մասին» իր որոշման մեջ, Մոսկվայում անդրկովկասյան ներկայացուցչից պահանջում էր, որպեսզի նա ուսանողների ստույգ հաշվառում անցկացնի, հետևի նրանց ուսման ընթացքին և նրանց ավարտելուց 6 ամիս առաջ հայտնի Անդրերկոմին։ Այդ որոշման հիման վրա կարիքավոր ուսանողները օգնության կարգով ստա-

[15] „Социалистическое строительство АрмССР", стр. 113.
[16] Նույն տեղում, էջ 115։

ցան 50,000 ռուբլի։ Իր որոշման մեջ Անդրերկոմը Համկ(բ)Պ Կենտկոմին խնդրում էր, որ նախկինում բուհերն ու բտուհերն ավարտած և այժմ Մոսկվայում ու Լենինգրադում աշխատող 81 մասնագետների, ինչպես նաև այն բոլոր անդրկովկասցիներին (շուրջ 400 մարդ), որոնք ուսումնական հաստատություններն ավարտել էին 1934 թ. գործուղել Համկ(բ)Պ Անդրերկոմի տրամադրության տակ։ Շատ երիտասարդ մասնագետներ, որոնք ավարտել էին Մոսկվայի, Լենինգրադի և Միության այլ քաղաքների բուհերն ու բտուհերը, վերադարձան Անդրկովկաս, այդ թվում և Հայաստան՝ ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի տարբեր բնագավառներում աշխատելու համար։

Երկրորդ հնգամյակի տարիներին բարձր ու միջին որակի մասնագետների նշանակալից աճը հասցրեց այն բանին, որ Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները զինվեցին մասնագետ կադրերով։ Այդ մասին են խոսում հետևյալ տվյալները. բացարձակ ցուցանիշներով առ մեկն ապրիլի 1934 թ. արդյունաբերության մեջ զբաղված 1033 ինժեներա-տեխնիկական աշխատողների դիմաց, 1937 թ. նույն ժամանակ կային արդեն 1563 ինժեներա-տեխնիկական աշխատողներ։ Աճն, այսպիսով, կազմում էր 51%։ Ինժեներա-տեխնիկական աշխատողների կադրերի աճի արագ տեմպերի շնորհիվ 1932 թվականի 100 բանվորին ընկնող 4,6% ինժեներա-տեխնիկական աշխատողների դիմաց 1937 թ. կար 10%[17]։

* *

Պարտիայի և կառավարության միջոցառումների իրականացման հետևանքով առաջին հնգամյակում և երկրորդ հնգամյակի առաջին տարիներին սոցիալիստական գյուղատնտեսության համար ստեղծվեցին բազմաքանակ կադրեր։ Գյուղատնտեսության մասնագետները հիմնականում պատրաստվում էին բարձրագույն ուսումնական հաստատություններում և տեխնիկումներում։

Գյուղատնտեսության բարձր որակի կադրերի պատրաստման հիմնական բազան Հայաստանում՝ Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտն էր, որ կազմակերպվեց 1930 թվականին՝ Երևանի Պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի հիմքի վրա և Անդրկովկասյան Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը, որը հիմնադրվեց 1928 թ. Երևանում։ Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի 1932 թ. փետրվարի 27-ի որոշմամբ՝ նախկին Անդրկովկասյան Անասնաբուժական—անասնաբուծական ինստիտուտը վերանվանվեց Հայաստանի Անասնաբուժական—անասնաբուծական ինստիտուտ։ Ժողկոմխորհը միաժամանակ միջոցներ է ձեռնարկում այդ ինստիտուտի ուսումնական շենքի և հանրակացարանի շինարարության ավարտման ուղղությամբ։ Հայաստանի գյուղատնտեսության համար մասնագետներ, բարձրագույն ուսումնական այդ հաստատություններից բացի, պատրաստվում էին նաև Սովետական Միության այլ բուհերում։ Առաջին հնգամյակում և երկրորդ հնգամյակի առաջին տարիներին Հայաստանում գյուղատնտեսական բարձր որակի կադրերի պատրաստման մասին են վկայում հետևյալ տվյալները. Սովետական իշխանության հաստատման մոմենտից մինչև առաջին հնգամյակի սկիզբը գյուղատնտեսական բուհերում պատ-

[17] ՄԼԻ Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, 1937, գ. 255, թ. 64։

բաստվել են ընդամենը 113 գյուղատնտեսներ, 1929—1932 թթ. պատրաստվել է 272 գյուղատնտես, իսկ 1933—1935 թթ.՝ 212։ Առաջին հնգամյակի տարիներին անասնաբույժ տեխնիկներ և բժիշկներ պատրաստվել են 93, իսկ 1933—1935 թ. 522[18]։ Բերված տվյալներից երևում է, որ առաջին հնգամյակի հետ համեմատած, երկրորդ հնգամյակի առաջին երեք տարում անասնաբույժ տեխնիկներ և բժիշկներ պատրաստվել են հինգ անգամ ավելի։ Գյուղատնտեսական մասնագետների թվի այդպիսի աճը բացատրվում էր կոլխոզային արտադրության աճող պահանջներից, որը երկրորդ հնգամյակի տարիներին զարգանում էր չտեսնված տեմպերով։

Գյուղատնտեսության համար պարտիական ու սովետական ղեկավար աշխատողների պատրաստման գործում կարևոր օղակ էր Հայաստանի Բարձրագույն Կոմունիստական գյուղատնտեսական դպրոցը։ Հայաստանում այդ դպրոցը Կազմակերպվեց ՀամԿ(բ)Պ ԿԿ 1932 թ. սեպտեմբերի 30-ի որոշման հիման վրա. Հայաստանի Բարձրագույն Կոմունիստական գյուղատնտեսական դպրոցը 1933—1935 թթ. ընթացքում պատրաստել է պարտիական և սովետական 234 բարձրորակ աշխատողներ։

Երկրորդ հնգամյակի սկզբում առավել լայն մասշտաբներով պատրաստվում էին գյուղատնտեսական միջին որակի մասնագետներ, որոնք լուրջ օգնություն էին ցույց տալիս սոցիալիստական գյուղատնտեսության և անասնապահության վերելքի գործում։ Հայաստանում 1920 թվականին գյուղատնտեսության համար կադրեր պատրաստող միջնակարգ ուսումնական հաստատությունները Լուսժողկոմատի տնօրինությունից հանձնվեցին Հողժողկոմատի տնօրինությանը։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1933 թ. հունվարյան պլենումի որոշումների կատարման հեռանքով, երկրորդ հնգամյակի առաջին տարիներին, որոնք հանդիսացան կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման տարիներ, բարձրացավ բարձր և միջին որակի մասնագետների պատրաստման տեմպը։ Ինչպես վերն ասացինք, պարտիան գտնում էր, որ կոլխոզային ղեկավար կադրերի պատրաստումը հանդիսանում է կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման գլխավոր օղակներից մեկը։ Դրա համար էլ Հայաստանի պարտիական կազմակերպությունները ուժեղացնում են գյուղատնտեսության համար ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման տեմպերը։ Այդ բանն են վկայում Երևանի Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի և Հայաստանի այլ բուհերի և տեխնիկումների պարտիական կազմակերպությունների աշխատանքները։ Պարտիական կազմակերպությունները պայքարում էին ՍՍՌՄ Կենտգործկոմի 1932 թ. սեպտեմբերի 19-ի, ԿԿ և ՀամԿ(բ)Պ 1933 թ. հունվարյան պլենումի և ժողովրդական տնտեսության մասնագետների պատրաստման մասին պարտիայի և կառավարության այլ կարևոր պատմական որոշումների կենսագործման համար։

ՍՍՌՄ Կենտգործկոմի վերը հիշատակված որոշումը պատմական փաստաթուղթ էր բուհերի և տեխնիկումների համար։ Այդ որոշման կարևորությունը նրանումն էր, որ այնտեղ ձևակերպված էին սովետական մասնագետների պատրաստման հիմնական խնդիրները։

[18] „15 лет Советской Армении в цифрах", 1935, стр. 174.

Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի պարտիական կազմակերպությունը ընդհանուր մոտեցում այն խնդիրների կատարմանը, որոնք դրված էին հիշված որոշման մեջ։ Այդ նպատակի համար նա մոբիլիզացրեց ուսանողական մասսային, պրոֆեսորա-դասախոսական կազմին և ինստիտուտի վարչական աշխատողներին։ Ինստիտուտի պարտիական կազմակերպությունը նշանակալից աշխատանք է կատարում տեսական և գործնական պարապմունքների բարելավման ուղղությամբ, ուշադրություն դարձնելով հատկապես դասախոսությունների գիտական մակարդակի վրա, պայքար մղելով տեսության և պրակտիկայի անջատվածության դեմ։ Բարելավվում է արտադրական պրակտիկան, որը անց էր կացվում տնտեսությունների կոլտնտեսություններում ու սովխոզներում՝ տարբեր դասախոսների ղեկավարությամբ։ Պարտիական կազմակերպությունը միաժամանակ գրգռվում էր ուսանողների և դասախոսական կազմի կողմից մարքսիստական-լենինյան դիտություն տիրապետելու ուղղությամբ։

Ուսանողների և պրոֆեսորա-դասախոսական կազմի մերձեցման նպատակով պարտիական կազմակերպությունը սուաջ է քաշում պրոֆեսորա-դասախոսական կազմի շեֆությունը ուսումնական առանձին խմբերի նկատմամբ։ Դասախոսները աշխատանք էին տանում հանրակացարաններում՝ լեկցիաներ էին կարդում, կազմակերպում դրույցներ, ուշադրություն էին դարձնում ուսանողների կենցաղական հարցերի վրա և այլն։ Այդ բոլոր միջոցառումները ուղղված էին ուսման որակի բարձրացման, խորը գիտելիքներով մասնագետների պատրաստման գործի բարելավման, նրանց մեջ աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունքի մշակման և այլ հարցերին։ Ինչ խոսք, որ այդ ամենը ոչ իր դրական արդյունքները և բարձրացավ ուսանողների առաջադիմությունը։ Ուսումնական պրոցեսի ավանդարդում ընթանում էին կոմունիստները և օրինակ ծառայում ուրիշների համար։ Այսպես, ամենային սեսիոն քննությունների ժամանակ կոմունիստների 37%-ը ստացավ գերազանց, 47%-ը՝ լավ և 17%-ը բավարար գնահատականներ[19]։

Հայաստանի գյուղատնտեսական բուհերի և տեխնիկումների 1932/33 և 1933/34 ուսումնական տարվա բոլոր շրջանավարտները ուղարկվում էին անմիջապես կոլխոզներ։ 1933 թ. տեխնիկումներն ավարտած գյուղատնտեսության 245 մասնագետներից 112-ը ամրացվեցին խոշոր կոլխոզներին և ֆերմաներին։ Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի 1934 թվականի 102 շրջանավարտներ ուղարկվում են աշխատելու տնտեսությունների գյուղատնտեսության մեջ[20], իսկ Երևանի Անասնաբուժական ինստիտուտի 1935 թվականի 211 շրջանավարտները Համկ(բ)Պ Անդրերկրամի 1935 թ. փետրվարի 15-ի որոշմամբ, ելնելով ժողովրդական տնտեսության պահանջներից, բաշխվում են հետևյալ կերպ. Ադրբեջանական ՍՍՌ համար՝ 59 մարդ, Վրացական ՍՍՌ համար՝ 55 մարդ, Հայկական ՍՍՌ համար՝ 41 մարդ և ՍՍՌՄ-ի այլ շրջանների համար՝ 40 մարդ, ասպիրանտուրայում են թողնվում 7 մարդ և 9 հոգի էլ ԱՍՖՍՌ այլ կազմակերպությունների համար։

Սոցիալական մասնագետների պատրաստման գործի հետագա բարելավման համար հակալական նշանակություն ունեցավ Համկ(բ)Պ և ՍՍՌՄ ժող-

[19] ՄԼԻ Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 447, 1933—34, գ. 7, թ. 3—6։
[20] Հայկ. ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 113, գ. 2124, թ. 6։

կոմսոմոլի 1936 թ. հունիսի 23-ի «Բարձրագույն ուսումնական հաստատությունների և բարձրագույն դպրոցի ղեկավարման մասին» որոշումը, որը բուհերի աշխատանքի մեջ բացահայտեց մի շարք լուրջ թերություններ և նշեց դրանց վերացման ուղիները։ Բուհերի աշխատանքի լուրջ թերություններից մեկն այն էր, որ բարձրագույն ուսումնական նոր հաստատությունների կազմակերպման և նախկիններին վերակազմակերպման ժամանակ մոռացվել էին տրվում այնպիսի պայմաններ, ինչպես դիտա-մանկավարժական կադրերով, լաբորատորիաներով, կաբինետներով, դրագարաններով ապահովելը, որի հետևանքով էլ ցածր էր մի շարք բուհերի ուսման որակը։ Թերությունների թվում նշվում էին նաև պրոֆիլների բազմազանությունը, միևնույն մասնագիտության պատրաստման գործում զուգահեռականությունը, արտադրական պրակտիկայի ղեկավարման բացակայությունը և այլն։

ՍՍՌՄ ժողկոմսովետի և Համ(կ)Պ Կենտկոմի որոշմամբ կարգավորվում է բուհերի ընդունելության գործը, պրոֆեսորա-դասախոսական կազմի առաջ դրվում ու հաստատվում, մշակվում է քննությունների հանձնումը՝ բուհերն ավարտողների համար, իսկ բարձրագույն տեխնիկական ուսումնական հաստատություններն ավարտողների համար՝ դիպլոմային նախագծերի պաշտպանության կարգը։ Ուսումնական պրոցեսի հիմնական ձևերը համարվում էին դասախոսությունները, գործնական պարապմունքները և արտադրական պրակտիկան։ Նշանակալից ուշադրություն էր դարձվում ուսանողների ինքնուրույն աշխատանքի վրա։ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների պարտիական կազմակերպությունների, այդ թվում և գյուղատնտեսական ինստիտուտի պարտիական կազմակերպությունը, իրենց աշխատանքի հիմքում դնելով Համ(կ)Պ Կենտկոմի և ՍՍՌ Միության ժողկոմխորհի որոշումները, սկսեցին եռանդուն աշխատանք տանել բարձրորակ մասնագետ կադրերի պատրաստման համար։

Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտի պարտիական կազմակերպությունը 1936 թ. հունիսի 29-ին մշակում է հատուկ միջոցառումներ՝ Համ(կ)Պ Կենտկոմի և ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետի վերը հիշատակված որոշումը կենսագործելու համար։

Պարտիական կոմիտեն նախատեսում էր մինչև հուլիսի 15-ը վերանայել ուսումնական ծրագրերը և առանձին կուրսերի դասացուցակները, կազմել լաբորատորիաների աշխատանքի պլան, ընդլայնել և ավելացնել ամբիոններին կից մի շարք լաբորատորիաների սարքավորումները՝ ուսանողների պրակտիկ, ինքնուրույն աշխատանքի ուժեղացման նպատակով։ Ուսանողների արտադրական պրակտիկան հաջող կազմակերպելու համար Պարտիական կոմիտեն Հայկական ՍՍՌ Հողագործության ժողկոմատի առաջ հարց է դնում ընդլայնել 6 կոլխոզների և 2 ՄՏՏ կայանների բազաները՝ արտադրական պրակտիկան անցկացնելու համար։ Միաժամանակ հարց է դրվում դաշտավարական սեփական տնտեսություն կազմակերպելու մասին։ Ինստիտուտի Պարտիական կոմիտեն խնդրանքով դիմում է Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմին, որպեսզի Կենտրոնական Կոմիտեն ինստիտուտի ղեկավար կազմը և դասախոսական կոլեկտիվը համալրի որակյալ աշխատողներով և մի քանի ընկերների թեկնածությունները առաջադրում է ամբիոնների վարիչների պաշտոնները դրավելու համար։ 1936/37 ուստարվա առաջին կուրսի համար ուսանողների

ընտրությունը հաջող անցկացնելու համար ստեղծվում է ընդունելության հատուկ հանձնաժողով։

Գյուղատնտեսության համար բարձր և միջին որակի մասնագետ կադրերի պատրաստման խնդրի հաջող իրականացումը երկրորդ հնգամյակում, հնարավորություն տվեց մասնագետների շարքերը համալրելու բազմաթիվ երիտասարդ կադրերով։ Հնգամյակի ընթացքում Հայկական ՍՍՌ-ում պատրաստվել է գյուղատնտեսության 900 բարձր որակի մասնագետներ՝ առաջին հնգամյակի 600-ի դիմաց, իսկ միջին որակի 1500՝ առաջին հնգամյակի 900-ի դիմաց[21]։

* * *

Երկրորդ հնգամյակի վերջում Սովետական Հայաստանն արդեն ուներ 6 բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ սովորում էին 4,900 ուսանողներ, 1937 թվականին ուսանողների կոնտինգենտը, համեմատած 1928 թ. հետ (1400 մարդ), աճում է երեք ու կես անգամ։ Երկրորդ հնգամյակի տարիներին բավականին ընդլայնվեց միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը և մեծացավ նրանցում սովորող ուսանողների թիվը։ Հայաստանում 1937/38 ուսումնական տարում կային 37 տեխնիկումներ, որոնցում սովորում էին 10,1 հազար մարդ։ Ուսումնական հաստատությունների նման քանակի աճ հայ ժողովուրդը ցարիզմի և դաշնակցական տիրապետության ժամանակ երազել անգամ չէր կարող։

Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով գիտության դերն ու նշանակությունը, պահանջում էր միջոցներ չխնայել նրա զարգացման համար, «Գիտության համար թանկ վճարելն ամոթ չէ, միայն թե ուսուցումը կարգին ընթանա»[22]։

Հայ ժողովրդի կուլտուրայի աճի նկատմամբ պարտիայի և կառավարության հոգատարության արդյունքը հանդիսացավ 1935 թ. կազմակերպված ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը։

Միութենական ռեսպուբլիկաներում, այդ թվում նաև Սովետական Հայաստանում, մասնագետների և այլ որակյալ կադրերի պատրաստման բնագավառում հսկայական հաջողությունները՝ հանրակրթական դպրոցների աճի հետ միասին, վկայում են մեր երկրում տեղի ունեցած կուլտուրական ռևոլյուցիայի մասին։

Պարտիայի և կառավարության միջոցառումների իրականացման հետևանքով Հայաստանում երկրորդ հնգամյակի տարիներին պատրաստվել է որակյալ բանվորական կադրերի մի բազմաքանակ բանակ, բարձրագույն և միջին որակի մասնագետներ՝ արդյունաբերության և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի համար։ Կադրերի անձնազոհ աշխատանքը հասցրեց այն բանին, որ երկրորդ հնգամյակի խնդիրները ռեսպուբլիկայում կատարվեցին ժամկետից շուտ։

---

[21] Տե՛ս „Социалистическое строительство АрмССР,“ стр. 90.

[22] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 468։